299 Կյանքի հաճույքներ շատ տեսա,

1. Կյանքի հաճույքներ շատ տեսա,
Բայց ուրախություն չգտա,
Հիսուս տեսավ վիճակս թշվառ,
Լեցուց սիրտս ցնծությունով:
Տեր Հիսուսի հետ, (2)
Տեր Հիսուսի հետ կերթամ առաջ՝
Անվախ ու վստահ, խաղաղությունով,
Իրեն հնազանդվելով:
Առանց Իրեն չեմ կրնար ապրիլ,
Առանց Իրեն չեմ կրնար գործիլ.
Կյանքիս սկիզբը, ու նաև վերջը
Թող ըլլա միայն Ինքը:

Ալելուիա՛, ալելուիա՛:

2. Փորձություններու կհաղթիմ,
Իր անունը կդավանիմ,
Ո՞վ կրնա ինձի դեմ կենալ,
Երբ օծյալ Տերն իմ հետս է:
Կյանքիս առաջնորդ, միշտ վրաս հսկող,
Հոգերս փարատող Տեր մ՚ունեմ,
Ի՜նչ հիանալի գանձ մը ես ունիմ
Հավիտենական կյանքի:
Ամեն ինչ կուտամ ես իմ Փրկչին,
Որ զոհեց Իր կյանքն հանուն ինձի,
Ներեց ամենուն, որ զԻնք խաչեցին,
Բարիով հաղթեց չարին: